



ԵՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների մասին

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը

«Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային
համալսարան

Կրճատ անվանումը

ՄԳՀ

Գործունեության հասցեն

ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 30ա

Նախորդ հավատարմագրման մասին

որոշումը և ժամկետը

Հավատարմագիր N 025, 17.10.2002

Առանց վավերականության ժամկետի

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՀԻՄՔԸ

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամը (այսուհետ՝ ՈԱԱԿ), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով, «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959-Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, ՈԱԱԿ-ի ներկայացուցիչների, փորձագիտական խմբի, գործընթացի ՈԱԱԿ համակարգողի մասնակցությամբ քննարկեց «Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարանի (այսուհետ՝ ՄԳՀ) կողմից ներկայացված ինքնավերլուծության, փորձագիտական զեկույցի, զեկույցում նշված թերությունների վերացման մասին ՄԳՀ-ի գործողությունների ծրագրի և այդ ծրագրի վերաբերյալ փորձագիտական խմբի կարծիքի հիման վրա կազմված ՄԳՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների վերաբերյալ ՈԱԱԿ-ի եզրակացության նախագիծը:

Քննարկման արդյունքում ամրագրեց հետևյալը:

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում՝

12 հունիսի 2013

բուհի ինքնավերլուծության ներկայացում՝

13 դեկտեմբերի 2013

փորձագիտական այցի իրականացում՝

21-23 ապրիլի 2014 Վանաձոր,

25-26 ապրիլի 2014 Երևան

փորձագիտական զեկույցի ներկայացում՝

02 սեպտեմբերի 2014

թերությունների վերացման ծրագրի ներկայացում՝

01 հոկտեմբերի 2014

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը¹: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959-Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով²:

ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

Գնահատում իրականացնելիս փորձագիտական խումբը հաշվի է առել այն փաստը, որ «Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարանը լուծում է տարածաշրջանային խնդիր: ՄԳՀ-ի հիմնական առաքելությունն է ապահովել բուհի շրջանավարտների գործունակությունը, ինչպես նաև մատչելի կրթություն ապահովել ուսանողներին: Պետք է նշել նաև, որ իր առաքելության իրականացման ժամանակ բուհը հաշվի է առնում տնտեսական և սոցիալական զարգացման միտումները Վանաձորում և Երևանում:

ՄԳՀ-ն անցել է հավատարմագրում մինչ 2011 թվականը գործող պետական հավատարմագրման չափանիշների և կարգի համաձայն:

ՄԳՀ-ն առաջարկում է կրթական ծրագրեր երկու՝ բակալավրի և մագիստրոսի աստիճաններում: Կրթական ծրագրերը ընդգրկում են այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են՝ հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և բժշկական գիտությունները: ՄԳՀ ֆակուլտետները միավորվել են ֆինանսական և մարդկային ռեսուրսների սղության պատճառով. 5 ֆակուլտետի փոխարեն ՄԳՀ-ն այժմ ունի երկու ֆակուլտետ՝ 1. Տնտեսագիտության և մանկավարժության և 2. Իրավագիտության, օտար լեզուների և բժշկական: Պետք է նշել, որ ՄԿԾ-ները թույլ են կապված հետազոտության հետ. չնայած այն փաստին, որ մագիստրոսական կրթական ծրագրերում կա հետազոտական կրթամաս, սակայն ուսանողների մեծ մասը ներառված չէ հետազոտական աշխատանքներում: Ուսումնառության արդյունքների մակարդակում բուհը դեռ անելիքներ ունի, քանի որ դրանք ՄԿԾ-ներում դեռևս նկարագրված են առավել ընդհանրական ձևով: ՄԿԾ-ների մշակման և վերանայման գործընթացներում արտաքին և ներքին շահակիցների ներգրավվածությունը փոքր է: Դասավանդման մեթոդները թույլ են կապված գնահատման սկզբունքների հետ: Փորձագիտական խումբը գտնում է, որ ուսանողակենտրոն մոտեցման անցումը բուհում դեռևս ավարտուն չէ, և այդ հարցում բուհը պետք է լրացուցիչ ջանքեր գործադրի: Գրավոր քննությունների կազմակերպումը չի ապահովում և երաշխավորում ակադեմիական ազնվությունն ու գրագողության բացակայությունը, իսկ գնահատման քաղաքականությունն ու ընթացակարգերը բազմաթիվ շահակիցների կողմից հանդիպումների ժամանակ գնահատվել են որպես վերանայման անհրաժեշտություն ունեցող հարցեր:

ՄԳՀ-ի առաքելության բոլոր կետերը իրագործելու համար բուհը չունի անհրաժեշտ ռեսուրսները: ՄԳՀ Վանաձորի և Երևանի մասնաշենքերում գրադարանները հազեցած չեն ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներով և արդի գրականությամբ, փոքր է առկա

¹ Հավելված 1՝ Փորձագիտական խմբի կազմը

² Հավելված 2՝ Ամփոփ գնահատում

գրքերի և ամսագրերի քանակը: Օտար լեզուներով գրականությունը խիստ սահմանափակ է, չկան միջազգային ամսագրեր, չնայած այն հանգամանքին, որ համալսարանում դասավանդվող առարկաների մի մասը պահանջում է միջազգային գրականություն: Ուսումնառության նոր մեթոդաբանություն իրականացնելու համար սարքավորումները բավարար չեն: Էլեկտրոնային /թվային/ գրադարան ունենալը առայժմ ոչ իրատեսական քայլ է համարվում ՄԳՀ-ի կողմից, քանի որ անհրաժեշտ ֆինանսական և մարդկային ռեսուրսների պակաս կա: Գրադարանը և ուսումնական կենտրոնը կարևոր տարրեր են հետազոտական միջավայր և մշակույթ ստեղծելու գործում, իսկ դրանց ռեսուրսային ապահովվածության մակարդակը խիստ ցածր է: Համալսարանն իր ներքին գործընթացներում գրեթե չի օգտագործում տեղեկատվական տեխնոլոգիաներ, չնայած այն փաստին, որ բուհը իր Ռազմավարական Ծրագրում այն դիտարկում է որպես խնդիր: Ռազմավարական ուղղությունները և նպատակները չունեն հստակ պլանավորված ֆինանսական ռեսուրսներ: Չնայած բյուջեի հստակ բաշխվածությանը, այն շատ քիչ հնարավորություններ է ստեղծում նոր նախաձեռնությունների համար, հետևաբար ՄԳՀ-ն պետք է փորձի հետազոտել, թե ինչպես գտնել հավելյալ եկամուտներ:

ՄԳՀ-ն ապահովված է ՄԿԾ-ներին համապատասխան պրոֆեսորադասախոսական (ՊԴԿ) կազմով: Դասախոսների ընտրությունը իրականացվում է առկա նորմատիվ իրավական ակտերին համապատասխան, այնուամենայնիվ գոյություն ունեցող փաստաթղթերում և գործընթացներում բացակայում է մասնագիտական որակների հստակ նկարագրությունը՝ համաձայն ՄԿԾ-ների պահանջների: Համալսարանն ունի ՊԴԿ-ի ձևավորման կանոնակարգով դասակարգված պաշտոնները և դրանց նկարագրերը, սակայն չունի պաշտոնական առաջխաղացման հստակ կանոնակարգ: Հետազոտական գործունեության մեջ ներգրավվածության դեպքեր կան, սակայն դրանց թիվը շատ չէ: Դասախոսների շարժունության շատ քիչ դեպքեր են գրանցվել: ՄԳՀ-ում չեն մշակվում և իրագործվում ՄԿԾ-ի կարիքների վերլուծության հիման վրա պրոֆեսորադասախոսական և ուսումնասովանակ կազմի պարբերական վերապատրաստումներ, ինչը հնարավորություն կտա բարձրացնելու դասախոսների մասնագիտական որակները և առավել մեծ հնարավորություններ կստեղծի ՄԿԾ-ների նպատակների իրագործման համար:

Բուհում առկա են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության չափանիշներ, թափանցիկ է ընտրության քաղաքականությունը, սակայն թիրախային չէ: Մասնագիտական կողմնորոշման և բուհի կրթական հնարավորությունների մասին իրազեկման աշխատանքներ կազմակերպվում են, սակայն հաստատված քաղաքականությունը բացակայում է: Յուրաքանչյուր մասնագիտության ուսանողներին կցվում է հիմնական մասնագիտական առարկաներ դասավանդող դասախոսներից մեկը՝ որպես խորհրդատու: Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումների վերլուծությունը ցույց է տվել, որ ուսանողները բարձր են գնահատում խորհրդատուի աշխատանքն ու նրա կողմից տրված խորհրդատվությունները: Առկա են նաև խորհրդատվական պարապմունքների ժամանակացույցերը: Սակայն նշված վերլուծությունը ամբողջությամբ չի բացահայտում խորհրդատվական պարապմունքների արդյունավետությունը և չկան ուսանողների կարիքների և մատուցվող ծառայությունների արդյունավետության համեմատության հիմքեր: Կարիերայի կենտրոնի կողմից ուսանողներին տրամադրվող ծառայությունների մի մասը դեռևս նոր է պլանավորված կամ ընթացքի մեջ է: Փորձագիտական խումբը նաև տարբեր խմբերի հետ

հանդիպումների ժամանակ նշված գործընթացի կազմակերպման տարբերություններ նկատեց Վանաձորում և Երևանում: Ուսանողական խմբերի մի մասը ծանոթ է կուրսղեկի աշխատանքին և գործառույթներին, սակայն ուսանողների մեջ կային նաև այդ համակարգից անտեղյակներ, ինչը վկայում է կուրսեղի ինստիտուտի դեռևս լիովին չկայացած լինելը: Ուսանողների մասնակցությունը որակի ապահովման և գնահատման գործընթացներում հստակ համակարգված չէ ՄԳՀ-ում, որակի ապահովման գործարկման մեխանիզմները /հարցումներ, առաջարկների և բողոքների արկղ/ չեն ընդհանրացվում և վերլուծվում:

ՄԳՀ կառավարչական գործառույթների իրական պատկերը լիովին հասկանալի և պարզ չէ, ինչը վկայում է ՄԳՀ կառավարման օղակների իրավասությունների ոչ հստակ լինելու և որոշումների կայացման գործընթացի ոչ թափանցիկ լինելու մասին: Որոշումների կայացումը հիմնականում կրում է իրավիճակային լուծումների բնույթ: Համալսարանի կառավարման, ինչպես նաև որակի ապահովման համակարգը բավականաչափ հիմնավորված/տրամաբանական չէ աշխատանքային ծանրաբեռնվածության տեսանկյունից: ՄԳՀ-ն խնդիր ունի արտաքին և ներքին շահակիցներին որոշումների կայացման գործընթացում լիարժեք մասնակից դարձնելու հարցում, իսկ հաղորդակցման մեխանիզմների մեջ կան բացթողումներ: Տարածաշրջանի կարիքները հետազոտված են, սակայն հավաքված տեղեկատվությանը վերաբերում և օգտագործում են ոչ կանոնակարգված ձևով՝ առանց դրանք ուսումնական պլաններում և կրթական գործընթացում ակտիվ գործողությունների փոխակերպելու ֆորմալ ընթացակարգերի:

ՄԳՀ որակի ապահովման գործընթացների մեծ մասը գտնվում են պլանավորման փուլում: Շահակիցների իրազեկվածությունը ցածր է որակի ամբողջական կառավարման խնդիրների վերաբերյալ, ինչպես նաև պլանավորում-իրականացում-ստուգում-բարելավում հաջորդական շղթայի ներդրման և կիրարկման փաստացի գործընթացների մասին:

ՄԳՀ որակի ապահովման ձեռնարկը, որը մշակվել է ՄԳՀ աշխատակիցների կողմից, մանրամասնորեն ներկայացնում է որակի ներքին ապահովման գործընթացը կանոնակարգող փաստաթղթերը, սակայն դրանում բացակայում է տեղեկատվությունը, թե ինչ առաջավոր փորձ է ընտրվել, որը թույլ կտա նշված քաղաքականության և մոտեցումների աշխատանքը, և թե որքանով են իրազեկված և բավարարված շահակիցները: Այդուհանդերձ, ՄԳՀ-ում դեռ որակի մշակույթը լիովին ձևավորված չէ, քանի որ առկա որակի ապահովման մարդկային և մասնագիտական ռեսուրսները և նրանց փորձարկման մակարդակը բավարար չեն որակի ապահովման բավարար աշխատանք իրականացնելու համար, շահակիցների մեծամասնությունը տեղեկացված չէ բուհում կատարվող գործընթացներին, որակի ապահովման մեխանիզմները հստակ չեն գործում և որակի ներքին ապահովման մեխանիզմների արդյունավետության վերլուծությունը բացակայում է:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ

- 1) ՄԳՀ-ն ունի կարևոր կրթական և սոցիալական դեր, ինչպես նաև լուծում է տարածաշրջանային խնդիր: ՄԳՀ-ն իրականացնում է իր առաքելությունը՝ հաշվի առնելով տեղական պահանջները:
- 2) ՄԳՀ-ն ունի մոտիվացված և նվիրված դասախոսական և ուսումնաօժանդակ կազմ:

- 3) Ամուր է ՄԳՀ կապը իր շրջանավարտների և գործատուների հետ, որոնք պարբերաբար հանդիպումներ են ունենում համալսարանի ղեկավար կազմի, դասախոսների և ուսանողների հետ:
- 4) ՄԳՀ-ն ունի կրթական ծրագրերի մշակման ուղենիշներ, և կրթական ծրագրերի մի մասը մշակված է ուսումնառության վերջնարդյունքներով:
- 5) ՄԳՀ-ն մշակել է մի շարք փաստաթղթեր և ներքին ընթացակարգեր՝ որակի ամբողջական կառավարման նպատակով:

ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ

- 1) Կառավարման մեխանիզմներն ու քաղաքականությունը չեն ապահովում արտաքին և ներքին շահակիցների բավականաչափ ներգրավվածությունը որոշումների կայացման և որակի ապահովման գործընթացներում:
- 2) Մասնագիտության կրթական ծրագրերի իրականացման համար համալսարանում առկա է ֆինանսական աղբյուրների պակաս:
- 3) Դասավանդման նպատակների, դասավանդման մեթոդների և գնահատման միջև կապն ամուր չէ:
- 4) Ոչ բոլոր ՄԿԾ-ներում է նկարագրված ուսումնառության արդյունքները համալսարանի կողմից մշակված ուղենիշներին համապատասխան:
- 5) Առկա ռեսուրսները ՄԳՀ-ն չի համադրում իր ռազմավարական նպատակների հետ:
- 6) ՄԳՀ գրադարանում մասնագիտական գրականության պակաս կա, իսկ էլեկտրոնային գրադարանի առկայությունը պահանջում է անհրաժեշտ մարդկային և ֆինանսական ռեսուրսներ:
- 7) Հետազոտական գործունեության համար առկա ռեսուրսները բավարար չեն, թույլ է մագիստրոսական կրթական ծրագրի հետազոտական բաղադրիչը, իսկ ուսանողներն ու պրոֆեսորադասախոսական կազմը բավականաչափ ներգրավված չեն հետազոտական աշխատանքներում:
- 8) ՄԳՀ կայք էջը չի պարունակում բուհի գործունեության և առօրյա կյանքի մասին ամբողջական տեղեկատվություն:
- 9) Ցածր են ՄԳՀ որակի ապահովման աշխատակիցների՝ իրենց լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ մասնագիտական կարողությունները և որակի կառավարման մեխանիզմների մասին իրազեկվածությունը:
- 10) ՄԳՀ շենքային հարմարությունները համապատասխանեցված չեն հատուկ կարիքներ ունեցողների համար:

Համալսարանին առաջարկվում է.

Առաքելություն և նպատակներ.

- 1) Գրել սեղմ տեսլական և իրատեսական առաքելություն՝ ներառելով այն, թե որն է «Մխիթար Գոշ» համալսարանի հիմնական առանձնահատկությունը, նկարագրելով, թե հատկապես որ ասպեկտներում է ՄԳՀ-ն ցանկանում հասնել իրական գերազանցության/կատարելության, ինչպես է ցանկանում, որ մյուսները իրեն ընկալեն, որն է այն բնութագիրը, որով ցանկանում

է ճանաչված լինել իր գործընկերների և հանրության շրջանում, ինչպես նաև միջազգային մակարդակում, ինչպես է արտացոլելու համալսարանի առաքելությունը իր ուսումնական պլաններում, դասընթացներում և դասավանդման մեթոդներում, որոնք են շրջանավարտների համար այն տարբերակիչ հատկանիշները, որոնք ցանկանում է զարգացնել և այլն:

- 2) Վերանայել ռազմավարական ծրագիրը: Անհրաժեշտ է համալսարանի առաքելությունն ու ռազմավարությունը համապատասխանեցնել համալսարանի առկա հնարավորություններին և առկա ռեսուրսներին:
- 3) Ընդլայնել ու զարգացնել շահակիցներին բուհի ռազմավարական ծրագրի մասին իրազեկման գործընթացը /նախևառաջ ներքին շահակիցներին/:
- 4) Բարելավել, ներդնել և իրագործել բուհի շահակիցների կարիքների վերհանման կանոնակարգված քաղաքականություն, որը կապահովի կազմակերպվող հարցումների և հետադարձ կապի այլ մեխանիզմների հավաստիությունը և դրանց արդյունքների հիման վրա որոշումների կայացման թափանցիկությունը և հիմնավորվածությունը:
- 5) ՄԳՀ առաքելության և ռազմավարական ծրագրի վերանայմանը զուգահեռ՝ նախագծել և հստակ առանձնացնել գործողությունների իրականացման չափելի ակնկալվող արդյունքներ, դրանց գնահատման որակական և կատարողական հստակ ցուցիչներ, նախանշել անհրաժեշտ մարդկային և նյութական ռեսուրսներ:

Կառավարում և վարչարարություն.

- 6) Վերանայել կազմակերպական կառուցվածքը, հստակ սահմանել և հաստատել բոլոր ստորաբաժանումների/բաժինների գործառույթները, պատասխանատվությունները և իրավասություններն ու մասնագետների ընտրության, աշխատանքի ընդունման կարգերն ու մեխանիզմները: Հնարավորության դեպքում անհրաժեշտ է նշել նաև ստորաբաժանումների բնույթը (օրինակ՝ նախատեսված է, որ այն ունենա մասնակցային գործառույթ կամ վարչական/որոշումների կայացման/կառավարման գործառույթ կամ խառը և այլն):
- 7) Ոչ ֆորմալ հաղորդակցությունը լրացնել ֆորմալ փաստաթղթային գործընթացներով /արձանագրություններ, հաշվետվություններ, լսումներ/՝ որպեսզի լրացվեն հաղորդակցության բաց կողմերը (միայն ոչ ֆորմալ բավարար չէ ՊԻՍԲ/PDCA շրջանակի կայուն իրականացումը ապահովելու համար): Անհրաժեշտ կլինի հետազայում զարգացնել և կիրառել Տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաները (SCS)՝ այս խորհրդատվությունները իրագործելու համար /ի հավելումն ներկայիս ոչ ֆորմալ հաղորդակցությանը/:
- 8) Ստեղծել համալսարանի էթիկայի կանոնակարգ, որը կհամապատասխանի համալսարանի առաքելությանը/տեսլականին:
- 9) Մշակել և ֆորմալիզացնել բուհի գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրության գործընթացը:
- 10) Կարճաժամկետ պլանավորումը համալրել միջնաժամկետ ու երկարաժամկետ պլանավորումներով՝ համապատասխան ակնկալվող արդյունքների չափման ցուցիչներով:

- 11) Պարբերաբար կազմակերպել ֆորմալ հանդիպումներ համալսարանից դուրս մասնագիտական ոլորտի ներկայացուցիչների հետ՝ արտաքին շահակիցների կարծիքները հավաքագրելու նպատակով:
- 12) Պարբերաբար հետադարձ կապ տրամադրել շահակիցներին իրենց առնչվող իրականացված հարցումների արդյունքների և հավաքված տեղեկատվության վերաբերյալ:
- 13) Խորը և համապարփակ ձևով ուսումնասիրել կրթության կառավարման առաջավոր փորձը, արդյունավետ տեղայնացնել այն, ինչպես նաև վերապատրաստել ՄԳՀ վարչական աշխատակազմին կրթության կառավարման գծով, ինչը համալսարանի կառավարման և վարչարարության զարգացման գործում էական նշանակություն կարող է ունենալ:
- 14) ՄԳՀ շահակիցների շրջանում տարածել որակի ապահովման ձեռնարկի՝ հատկապես ՊԻՍԲ դրույթները:

Մասնագիտության կրթական ծրագրեր.

- 15) Ակտիվորեն ներգրավել արտաքին շահակիցներին կրթական ծրագրերի կազմման, իրականացման և վերանայման գործընթացներում՝ ընդհուպ մինչև համատեղ կրթական ծրագրերի մշակում և իրականացում այլ համալսարանների հետ՝ /միջազգային մակարդակում/ որպես համատեղ հետազոտությունների խթանման և հավելյալ փորձի ներմուծման միջոց:
- 16) Մշակել առաջավոր փորձի համեմատական վերլուծության քաղաքականություն և ընթացակարգ, որը կնպաստի ՄԿԾ-ների՝ միջազգային համապատասխան փորձին համադրելիության և ուսանողների շարժունության բարձրացմանը:
- 17) Ձեռնարկել քայլեր և միջոցառումներ՝ ՄԿԾ-ներում սահմանված կրթական վերջնարդյունքների և դասավանդման ու ուսումնառության նոր մեթոդաբանության համապատասխանության պարբերական գնահատման և բարելավման համար:
- 18) Իրականացնել ՄԳՀ-ի ՄԿԾ-ների պարբերական գնահատում ՄԿԾ-ների հետագա զարգացման համաձայնեցված ընթացակարգով, որը հիմնված կլինի պլանավորում-իրականացում-ստուգում-բարելավում շրջափուլի սկզբունքների վրա և տարածել արդյունքները բաց, համակարգված և թափանցիկ ձևով, ինչպես նաև աջակցել շահակիցներին, որպեսզի արդյունքները և բարելավմանն ուղղված որոշումները գործարկվեն:
- 19) Նպաստել ուսանողների քննադատական մտածողության զարգացմանը՝ մասնավորապես համալսարանում իրենց դերը, իրավունքները սահմանելիս: Կրթական վերջնարդյունքներն ու դասավանդման մեթոդները պետք է նպաստեն ուսանողների մոտ այս հատկանիշի ձևավորմանը:

Ուսանողներ.

- 20) Մշակել քայլեր, շրջանավարտների և կարիերայի խնդիրներով զբաղվող համապատասխան կառույցի գործունեության արդյունավետության բարձրացման համար, մասնավորապես՝ ֆակուլտետներում իրականացվող շրջանավարտների կարիերայի նպաստող աշխատանքների համակարգման, աշխատաշուկայի պահանջների և դրանց առնչվող

հարցերի շուրջ համապատասխան տեղեկատվության հավաքագրման, տարածման և այլ ուղղություններով: Հատկապես կարևոր է ուսանողների պրակտիկայի և կարիերայի ծառայությունների միասնական քաղաքականության մշակումն ու իրագործումը:

- 21) Ձեռնարկել քայլեր՝ ուղղված ուսանողներին տարբեր գիտահետազոտական աշխատանքներում ներգրավելուն:
- 22) Ձեռնարկել քայլեր՝ ուսանողների իրավունքների պաշտպանության գործընթացի արդյունավետության բարձրացման ուղղությամբ:
- 23) Վերանայել ուսանողներին խորհրդատվական ծառայությունների մատուցման ընթացակարգը՝ գործընթացի արդյունավետության վերլուծության և գնահատման հիման վրա, ինչը կնպաստի նաև համալսարանի կառավարման և գործունեության արդյունավետության բարձրացմանը:

Պրոֆեսորադասախոսական և ուսումնասօժանդակ կազմ.

- 24) Անհրաժեշտ է ձեռնարկել քայլեր դասախոսներին գիտահետազոտական աշխատանքներում ներգրավման խրախուսման ուղղությամբ:
- 25) Ներգրավել ավելի շատ մասնագետներ այլ համալսարաններից փորձի փոխանակում և դասախոսական կազմի մասնագիտական զարգացում ապահովելու համար:
- 26) ՊԴԿ-ի գնահատման արդյունքների հիման վրա կայացված որոշումների մասին ավելի հստակ իրազեկել շահակիցներին, կիրառելով դրական փորձի տարածման և աշխատակիցների խրախուսման ճկուն մեխանիզմներ:
- 27) Ձևավորել և զարգացնել ՄԳՀ դասախոսական կազմի ձևավորման, ընտրության մեխանիզմի, մասնագիտական առաջխաղացման, վերապատրաստման և որակավորման բարձրացման համակարգեր:
- 28) Հստակեցնել դասախոսական կազմի հետ պայմանագրերում հետազոտական մասը՝ թույլատրելով նրանց առավել շատ ժամանակ հատկացնել հետազոտությանը, և հաշվի առնել նրանց հետազոտության արդյունքները՝ առաջխաղացման և կարիերայի գնահատման ժամանակ:

Հեղափոխություն և զարգացում.

- 29) Մշակել հետազոտության գործունեության գնահատման, ակադեմիական ազնվության և հետազոտական էթիկայի կանոնակարգեր: Գրագողությունը և գիտական խաբեությունը ներկայացված են որպես վտանգ ինքնավերլուծական զեկույցում: Նշված վտանգները կարելի է նվազեցնել համապատասխան հասանելի համակարգչային ծրագրային ապահովվածությամբ, հետազոտական էթիկայի կանոնադրությամբ և այլ մեխանիզմներով:
- 30) Հետազոտական գործունեության ոլորտում ընտրել մեկ ուղղություն որը կարելի է զարգացնել և հասցնել գերազանցության, օրինակ՝ /մանկավարժություն, ստոմոտոլոգիա, իրավաբանություն, լեզու և գրականություն, կառավարում և այլն/:
- 31) Ձեռնարկել միջոցառումներ միջազգային գրախոսվող ամսագրերում համալսարանի աշխատակիցների հետազոտության արդյունքների հրապարակման խրախուսման համար /համատեղ հրապարակումներ միջազգային գործընկերների հետ/:

32) Հետազոտության ոլորտում համալսարանի ռազմավարությունը պետք է վերաբերի հետազոտական ուղղությունները հստակ ընտրելու մեխանիզմի ձևավորմանը, հետազոտական աշխատանքների կազմակերպմանը, հետազոտությունների ֆինանսավորման աղբյուրների բացահայտմանը, համալսարանում հետազոտությունների արդյունքների կիրառմանը և նաև շահակիցների շրջանում դրանց առևտրայնացմանը, մասնավոր հատվածի հետ համատեղ գիտական ծրագրերի մշակմանը և իրականացմանը, ուսանողների ներգրավվածության աստիճանի բարձրացմանը:

Ենթակառուցվածք և ռեսուրսներ.

33) Ստեղծել ուսումնական միջավայրի բարելավման առաջնային պլան՝ դրանում առաջնայնություն տալով SCS-ների ներդրմանը և ուսումնական ռեսուրսների հասանելիության ապահովմանը, /օրինակ մեծացնել հասանելիությունը գրքերին և ամսագրերին, միջգրադարանային փոխանակման համաձայնագրերի շրջանակներում/ մշակել SCS տեղակայման պլան և ապահովել համապատասխան վերապատրաստումներ դասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմի և վարչական կազմի համար:

34) Առաջավոր փորձի վերլուծության ու համեմատության, ինչպես նաև նոր ֆինանսական եկամուտների վրա հիմնվելով՝ շարունակաբար բարելավել համալսարանի գրադարանը, լաբորատորիաները, դասասենյակները, ինտերակտիվ դասավանդման և ուսումնառության համար անհրաժեշտ միջավայրը և այս բոլորը ներառել բուհի ռազմավարական ծրագրում:

35) Մանրամասնորեն պլանավորել ռեսուրսները գնահատող ցուցանիշների օգտագործման հիմնավորումներ, որոնք կնկարագրեն այս կամ այն ռեսուրսի քանակը, որակը և դրանց փոփոխությունները, այդ ռեսուրսի օգտագործման աստիճանը, արդյունավետությունը, նոր ռեսուրսների նկատմամբ պահանջարկի վերհանման, դրանց ձեռքբերման և աղբյուրների բացահայտման մեխանիզմները:

36) Ձեռնարկել քայլեր բուհի արտաքին ֆինանսավորման աղբյուրները ընդլայնելու ուղղությամբ և ներդնել ծրագրեր ֆինանսական հոսքերի ավելացման համար:

Հասարակական պարասխանալիություն.

37) Ավարտել և ամփոփել հասարակական պատասխանատվության ոլորտում բուհի պլանավորած քայլերը և մշակել դրանց գնահատման կոնկրետ ցուցիչներ:

38) Ակտիվացնել մի շարք ոլորտներում պրակտիկայի անցկացումը, /օրինակ՝ արդյունաբերություն, գործարար ոլորտ և փոքր և միջին ձեռնարկություններ/ ոչ թե միայն կառավարման մարմիններում, բանկերում և իրավաբանական կազմակերպություններում:

39) Էապես հզորացնել ու բարելավել հետադարձ կապի մեխանիզմները, ընդլայնել ու բարելավել հասարակական և մասնավոր սեկտորի հետ բուհի կապի մեխանիզմները:

40) Հստակ կանոնակարգել տարբեր դպրոցներում և այլ կազմակերպություններում կազմակերպվող մասնագիտական կողմնորոշման աշխատանքները, դրանք դարձնել առավել թիրախային պլանավորված և շահակիցների կարիքներին ու արձագանքներին համահունչ:

- 41) Հրատապ անհրաժեշտություն կա ՄԳՀ կայքի բովանդակությունը և գործունեության մեխանիզմները վերանայելու և այն առավել տեղեկատվական, ուսանելի, կիրառելի ու օգտվողահաճո /user friendly/ դարձնելու համար:
- 42) Աստիճանաբար ստեղծել տեխնոլոգիաների և գիտելիքի փոխանցման համար ռազմավարություն, որը բացի շրջանավարտների աշխատանք ունենալուց, կնպաստի նաև հավելյալ ֆինանսական եկամուտների հոսքին դեպի համալսարան: Դա հնարավորություն կտա ներգրավել միջազգային հետազոտական ծագրերում, ուսանողների և դասախոսների շարժունությանը նպաստող դրամաշնորհային ծրագրերում:

Արտաքին կապեր և միջազգայնացում.

- 43) Ստեղծել միջազգայնացման համահամալսարանական հայեցակարգ և/կամ ռազմավարություն՝ կարճաժամկետ ու երկարաժամկետ գործողություններով ու վերջիններիս մշտադիտարկման ու գնահատման մեթոդաբանության մշակման ուղղությամբ, նախևառաջ սկսելով մշակել համապատասխան կարգավորող փաստաթղթերի նախագծերը՝ ընդգրկելով ներքին և արտաքին շահակիցներին:
- 44) Խրախուսել դասախոսական և վարչական կազմին միջազգային փոխանակման և վերապատրաստման ծրագրերում ներգրավելու համար:
- 45) Զարգացնել միջազգային և միջբուհական կապերը, գնահատել առկա կապերը և դրանց արդյունավետությունը, ներդնել պլանավորված գործողությունների գնահատման հստակ ցուցիչներ:
- 46) Վերանայել միջազգային համագործակցության պայմանագրերը /միջազգային պայմանագրերը պետք է որոշակի հնարավորություններ ապահովեն, օրինակ՝ ֆինանսական միջոցներ ուսանողների փոխանակման համար, վարձավճարներ ուսանողների համար և այլն/ և համոզված լինել, որ այս խնդիրների լուծումը օգնում է լուծել բուհի խնդիրները, օրինակ՝ լեզվական խնդիրների լուծումը, մարդկային և այլ ռեսուրսների պակասը /գրականություն S<S և այլն/:
- 47) Մեծացնել ուսանողների և դասախոսների շարժունությունը՝ հնարավորություններ ընձեռելով նրանց վերապատրաստման դասընթացներ անցնել կամ մասնակցել փոխանակման ծրագրերի, բարելավել միջազգայնացման քաղաքականությունը և այն առավել համահունչ դարձնել նոր իրողություններին:
- 48) Նկատի ունենալով, որ «Մխիթար Գոշ» համալսարանում միջազգային համալսարանների հետ պայմանագրերի թիվը աճում է՝ նման պայմանագրերում կարող են նախաձեռնվել համատեղ տպագրություններ, որպեսզի նվազեցվի միջազգային ամսագրերում տպագրվելու գինը, ինչպես նաև աստիճանաբար ստեղծվի միջազգային հետազոտական համայնքում ինտեգրվելու հնարավորություն:
- 49) Խիստ անհրաժեշտ է, որ միջազգային կապերի բաժինը գտնի միջազգային ծրագրերում ներգրավվածության նոր հնարավորություններ և այդ տեղեկատվությունը տարածի համալսարանի բոլոր շահակիցների շրջանում (հիմնականում դասախոսների և ուսանողների շրջանում):

Որակի ներքին ապահովման համակարգ.

- 50) Ձեռնարկել հրատապ քայլեր ՄԳՀ-ի կողմից կուտակած փորձի ուսումնասիրության, որակի ապահովման համակարգի արդյունավետության գնահատման և այդ գնահատման արդյունքների հիման վրա համակարգի հետագա զարգացման ուղղությամբ:
- 51) Վերանայել որակի ապահովման կառույցի աշխատակիցների մասնագիտական կարողություններին ներկայացվող պահանջները և կազմակերպել պարբերական դասընթացներ ու վերապատրաստումներ՝ դրանց արդյունավետության գնահատման հստակ մեխանիզմներով:
- 52) Հստակեցնել բուհում կազմակերպվող հարցումների, դրանց վերլուծության, արդյունքների հրապարակման մեխանիզմները՝ շարունակաբար բարելավելով ստացվող հետադարձ կապի մեխանիզմների հուսալիությունը:
- 53) Մշակել և ներդնել որակի ներքին ապահովման համակարգի պարբերական գնահատման և բարելավման մեխանիզմներ՝ հստակ պարբերականությամբ և հուսալի գնահատման արդյունքների հիման վրա:
- 54) Ձեռնարկել հրատապ քայլեր և միջոցառումներ՝ համալսարանի կողմից իրականացվող ներքին գնահատումների թափանցիկության բարձրացման և այդ գործընթացներում շահակիցների ակտիվ մասնակցության որակական բարելավման ուղղությամբ:
- 55) Մշակել և ներդնել իրատեսական ծրագիր որակի ապահովման մշակույթի ձևավորման արդյունավետության բարձրացման համար:

ԳՈՐԾՆԿԵՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ

Իրականացվել է նաև ՄԳՀ գործընկերային գնահատում միջազգային չափանիշներին համապատասխան, որը միաված է բուհի միջազգային մակարդակով մրցունակության բարձրացմանը և ՄԳՀ-ի ԵԲԿՏ ինտեգրմանը:

Գիտարկումներ

- ՄԳՀ տեսլականը հստակ և իրատեսական ձևակերպում չունի: Իսկ ռազմավարական ծրագիրը չի պարունակում բուհի առաջնահերթությունները և ռազմավարական ուղղությունները մշակելիս հաշվի չի առնված բուհի բյուջեն: Ներքին շահակիցների բավարարվածությունը բարձր է ՄԳՀ ներքին գործընթացներից, սակայն բավարարվածությունը դեռ չի նշանակում, որ շահակիցների կարիքները հաշվի են առնված, և ներքին ընթացակարգերը ապահովում են արդյունավետ կառավարում:
- Գործնականում, կառավարման կառուցվածքի արդյունավետությունը կախված է ներքին կազմակերպական կառուցվածքի միասնական ըմբռնումից: ՄԳՀ կառուցվածքը պարզ և հստակ չէ: Օրինակ, Գիտական Խորհուրդը կարևոր դեր ունի համալսարանի ներքին աշխատանքներում, իսկ դա նկարագրված չէ ՄԳՀ կառուցվածքում: Որակի ապահովումը նշված չէ Գիտական Խորհրդի կանոնադրության մեջ, մինչ գործնականում այն վճռորոշ դերակատարություն ունի բարձրագույն կրթության կառավարման մակարդակում և կարևոր է հավաստել, որ համալսարանը իր վերահսկողության տակ է պահում ՊԻՍԲ/PDCA ցիկլի իրականացումը: Կառուցվածքում առկա բոլոր մարմինների գործառույթների,

պատասխանատվությունների նկարագրությունները, ինչպես նաև նրանց միջև ֆորմալ հաղորդակցության հոսքերը պետք է հասանելի լինեն շահակիցներին: Կառուցվածքը պետք է լինի պարզեցված, հստակեցված և պետք է տարբերակում լինի կառավարման ակադեմիական և վարչական միավորների միջև:

- Տեղեկատվական հոսքերը պարզ չեն, քանի որ բոլոր մարմինների պատասխանատվության շրջանակները ֆորմալ սահմանված չեն: Բացակայում է տեղեկատվության տրամադրման համակարգը, ինչպես նաև ֆորմալ հաղորդակցման հոսքերը:
- Ուսանողների մոտ բացակայում է քննադատական մտածելակերպը: Համալսարանի ղեկավարությունը պետք է ուշադրություն դարձնի կրթական ծրագրերի վերջնարդյունքներում ինքնավստահության և անկախ մտածելակերպի տարրեր ներառելու խնդրին: Ուսանողները պետք է ի վիճակի լինեն աջակցել նորարարության իրականացմանը, նոր նախաձեռնությունների կատարմանը և նոր մոդելների ու սոցիալական գործընթացների ստեղծմանը հետևաբար քննադատական մտածողության հմտություններ ցուցադրել:
- Առկա են բազմաթիվ մեխանիզմներ, որոնք ապահովում են տվյալների հավաքագրումը, սակայն դրանք հիմնականում իրականացվել են թղթային տարբերակով, ինչը դժվարեցնում է տվյալների վերլուծությունը և սահմանափակում արդյունավետությունը: Տվյալների կառավարման և վերլուծության համակարգեր առկա չեն, որոնք հիմնված են SCS ռեսուրսների վրա:
- Ուսումնառության վերջնարդյունքները հիմնականում նկարագրված են առարկայական մակարդակում և ինչպես փորձագիտական այցից պարզ դարձավ, կրթական ծրագրերին մասնակից անձնակազմից և ծրագրերի համակարգողներից ոչ բոլորն են իրազեկ կրթական ծրագրերի մակարդակում ուսումնառության արդյունքների վերաբերյալ:
- ՄԳՀ-ի կողմից առաջարկվող մասնագիտական զարգացման և վերապատրաստումների դասընթացները բավարար չեն, և ենթադրվում է, որ դասախոսական կազմի ներկայացուցիչները իրենք պետք է հոգ տանեն այս խնդրի լուծման ուղղությամբ:
- Հիմնարար հետազոտություններ իրականացնելու համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսներ առկա չեն: Սա նաև հնարավորություն չի տալիս միջազգային ամսագրերում տպագրվել:
- Համալսարանի գիտական հանդեսը լավ նախաձեռնություն է, և դա հնարավորություն է տալիս ուսանողներին և դասախոսներին հոդվածներ տպագրել տեղական մակարդակում, ինչպես նաև իրենց գրավոր հմտությունները զարգացնել:
- Թվային գրադարանը բոլորովին թվային չէ և չի համապատասխանում միջազգային պահանջներին: ՄԳՀ-ում կան առարկաներ, որոնք պահանջում են արդի միջազգային գրականություն, սակայն դրանք առկա չեն ՄԳՀ գրադարանում: Թվային գրադարանի պատշաճ գործարկումը պահանջում է ֆինանսական և մարդկային ռեսուրսների լուրջ ներդրումներ: ՄԳՀ-ն նաև առավել պրոֆեսիոնալ գրադարանի կարիք ունի, առավել արդի գրականության առկայությամբ:
- ՄԳՀ ուսումնական կենտրոնը առավել նման է ընթերցասրահի, և ուսանողներին այնտեղ աշխատելու հնարավորություն չի տրվում: Սեղանների քանակն ու միջավայրը հարմարավետ չէին և սոցիալականացման հնարավորություն չէին տալիս: Գրադարանը և ուսումնական

կենտրոնը հետազոտական համայնքի և մշակույթի ստեղծման կարևոր տարրերն են համարվում:

- Համակարգչային կենտրոնը շատ քիչ քանակով համակարգիչներ ունի, իսկ կենտրոնը փակվում է երեկոյան ժամը 17:00, հաշվի առնելով անվտանգությունը: Սակայն սա ուսանողների համար հարմար ժամ չէ: Որպես առաջարկություն՝ լավ կլինի այս պատասխանատվությունը հանձնել ուսանողական խորհրդին, որպեսզի իրենք կառավարեն:
- SCS ռեսուրսները բավականին սահմանափակ են, հաշվի առնելով այն հանգամանքը, որ համալսարանն իր առջև որպես գերակա ուղղություն է համարում SCS ռեսուրսների զարգացումը:
- ՄԳՀ-ն արդեն քայլեր է ձեռնարկել իր բյուջեն հարստացնելու ուղղությամբ, մասնավորապես իրականացնում է միջազգային ուսանողների հավաքագրում, որը 2014 թվականին բավականաչափ աճել է մինչև 130 ուսանողի, որը նաև կնպաստի միջազգայնացմանը:
- Արդյունաբերությանը և կառավարությանը մատուցած ծառայությունները /օրինակ՝ պրակտիկաների միջոցով/ չեն ապահովում համալսարանին հավելյալ ֆինանսական եկամուտներ: Եվրոպական բարձրագույն կրթական տարածքում սրանք հիմնական միջոցներն են համալսարանին հավելյալ եկամուտների տրամադրման համար:

Խորհրդատվություններ

- 1) Գրել սեղմ տեսլական (առաքելություն)՝ ներառելով «Մխիթար Գոշ» համալսարանի հիմնական առանձնահատկությունը:
- 2) Անհրաժեշտ է համալսարանի առաքելությունն ու ռազմավարությունը համապատասխանեցնել համալսարանի առկա ռեսուրսներին:
- 3) Իրականացնել առավել թափանցիկ և ֆորմալ հաղոդակցություն ներքին շահակիցների հետ՝ SCS ընդգրկուն կիրառմամբ:
- 4) Մշակել համալսարանի նոր կազմակերպական կառուցվածք, որտեղ բոլոր ակադեմիական, ադմինիստրատիվ և կառավարման միավորները հստակ սահմանված են և նկարագրված:
- 5) Հստակ սահմանել և հաստատել բոլոր ստորաբաժանումների/բաժինների գործառույթները, պատասխանատվությունները և իրավասություններն ու դրանց ընտրության, աշխատանքի ընդունման կարգերն ու մեխանիզմները:
- 6) Համալսարանի ուսանողները պետք է սովորեն քննադատական մտածողության մասին հատկապես համալսարանում իրենց դերը սահմանելիս: Կրթական վերջնարդյունքներն ու դասավանդման մեթոդները պետք է նպաստեն ուսանողների մոտ այս հատկանիշի ձևավորմանը:
- 7) Ֆինանսական ռեսուրսները հարստացնելու համար անհրաժեշտ է ներգրավել մեծ քանակությամբ արտաքին ֆինանսավորմամբ ծրագրեր:
- 8) Հնարավորություններ ստեղծել դասախոսական կազմի համար միջազգային գրախոսվող ամսագրերում հոդվածներ տպագրել:
- 9) Դասախոսական կազմի հետ կնքվող պայմանագրերում ավելացնել հետազոտական մասը՝ թույլատրելով նրանց առավել շատ ժամանակ հատկացնել հետազոտությանը, և

հաշվի առնել նրանց հետազոտական կատարողականը առաջխաղացման և կարիերայի գնահատման ժամանակ:

- 10) Ուսանողներին և դասախոսական կազմի ներկայացուցիչներին ներգրավվել միջազգային հետազոտական ծրագրերում, ուսանողների և դասախոսների շարժունությանը նպաստող դրամաշնորհային ծրագրերում:
- 11) Մշակել գործունակ պլան SCS ռեսուրսների և ընթացակարգերի համար, ներառյալ համապատասխան վերապատրաստումներ անձնակազմի և վարչական կազմի համար:
- 12) Կարիերայի կենտրոնը դեռևս ամբողջովին չի գործում: Այն կարող է կենտրոնական դեր խաղալ բոլոր ասպեկտներում, օրինակ՝ համալսարանից դուրս պրակտիկաներ /նաև արդյունաբերության ոլորտում, փոքր և միջին ձեռնարկություններում և այլն/, միջազգային պրակտիկայի համար համագործակցության ցանցի հիմնում, ինչպես նաև կարիերայի ուղղորդում:
- 13) Համալսարանի որակի ապահովման կենտրոնը պետք է իրավասու լինի Որակի ապահովում իրականացնել առավել խորքային և ամբողջ համալսարանի մակարդակներում:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑՈՒՄ ՆՇՎԱԾ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ ԲՈՒՎՈՒՄ ԾՐԱԳԻՐԸ

ՄԳՀ-ն ընդունում է, որ փորձագիտական խմբի կողմից տրամադրված խորհրդատվությունները բուհի ռազմավարության շրջանակներում են, և ներկայացրել է «Փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների ծրագիր և ժամանակացույց» (այսուհետ՝ Ծրագիր)՝ հաստատված ռեկտորի կողմից 01.10.2014թ.:

Փորձագիտական խումբը, ուսումնասիրելով ՄԳՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման զեկույցում նշված թերությունների վերացման բուհի մշակված ծրագիրը, եզրակացնում է.

- Համաձայն ծրագրի՝ բուհը հանձն է առնում իրականացնել հավատարմագրման բոլոր տասը չափանիշների տիրույթներում նկարագրված խնդիրների շուրջ փորձագիտական խմբի տրամադրված բոլոր խորհրդատվությունները: Հրատապ փոփոխություններ պահանջող բոլոր խորհրդատվությունները ներառված են ծրագրում: Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ կան որոշ խորհրդատվություններ, որոնց գործողությունները, ըստ փորձագետների, բավարար չափով չեն տալիս բուհի քայլերի վերաբերյալ պատկեր:
 - Օրինակ՝ «Առաքելություն և Նպատակներ» տիրույթում ցանկալի կլիներ, որ բուհը ավելի հստակ նշեր, թե հատկապես ինչն է ճշտելու գործող 2011-2015թթ. ռազմավարական պլանում:
 - Բոլոր նպատակների համար ցանկալի է նշել, թե հատկապես ինչ նյութական ռեսուրսներ է նախատեսվում տրամադրել ցանկալի արդյունքներին հասնելու համար:
 - «Մասնագիտական կրթական ծրագրեր» տիրույթում ցանկալի էր նշել, թե ինչպես է այլ նպատակների իրականացումն արտացոլվելու մասնագիտական կրթական ծրագրերի հաջող իրագործման մեջ, և որ պակաս կարևոր չէ, բարեփոխված

կրթական ծրագրերի արդյունքի գնահատման համար, բացի միջազգային փորձագետների գնահատականից, ինչպիսի այլ ցուցիչներ են նախատեսվում:

- «Որակի ներքին ապահովման համակարգ» տիրույթում մշտապես իրականացվելիք քայլերի փոխարեն, ցանկալի կլիներ նշել առավել կոնկրետ պարբերականության ժամկետներ:


Ընդհանուր առմամբ ծրագիրը փոխկապակցված է գործունեության ոլորտների համար ընտրված ռազմավարությունների հետ, ապահովում է քայլերի տրամաբանական հաջորդականությունը, սակայն որոշ գործողությունների համար սահմանված չեն վերջանաժամկետներ: Ոչ բոլոր դեպքերում է հստակ սահմանվում, թե ով է պատասխանատու յուրաքանչյուր քայլի համար: Տրամադրված ռեսուրսները չեն բացահայտում դրանց բավարար լինելը բոլոր խնդիրների լուծման համար, որոշ դեպքերում նախատեսվում են միայն անորոշ մարդկային ռեսուրսներ: Թերությունների վերացման ծրագիրը, ընդհանուր առմամբ, սահմանում է իրատեսական ժամանակահատված յուրաքանչյուր քայլի համար, չնայած առանձին դեպքերում նշված է միայն գործողության սկիզբը, և իրատեսականությունը գնահատել չի հաջողվում: Քայլերի վերջնարդյունքների համադրումը թույլ է տալիս եզրակացնել, որ գործողության նպատակները հասանելի են: Գնահատման ցուցիչները մեծամասամբ թույլ են տալիս որոշել յուրաքանչյուր քայլի իրականացումը և արդյունքը, սակայն քիչ են բացահայտում կամ գրեթե չեն բացահայտում դրանց ազդեցությունը հատկապես մյուս գործողությունների վրա:


Եզրահանգում. Փորձագիտական խումբը գտնում է, որ Ծրագրի հիմնական մասի իրականացումը ռիսկեր չի պարունակում: Ծրագրում առկա քայլերի իրականացումը թույլ կտա բարելավել համալսարանի գործընթացները կանոնակարգող փաստաթղթերը: Պլանավորված ռեսուրսների տրամադրման դեպքում մոտակա երկու տարում սկսված կլինեն հիմնական գործընթացները: Այդ ժամանակահատվածից հետո կարելի է անդրադառնալ դրանց ազդեցության և արդյունավետության գնահատմանը:

Ելնելով վերոգրյալից, ՈԱԱԿ-ը Հավատարմագրման հանձնաժողովին առաջարկում է իր որոշման մեջ խթանել ՄԳՀ-ին՝

- 1) առաջնահերթ լուծում տալ **Մասնագիտության կրթական ծրագրեր, Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ, Ենթակառուցվածքներ և ռեսուրսներ, Որակի ներքին ապահովման համակարգ, Կառավարում և վարչարարություն, Հետազոտություն և զարգացում** ոլորտներում առկա խնդիրներին,
- 2) «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգի 12 կետով կամ Հավատարմագրման հանձնաժողովի կողմից սահմանված ժամկետներում պարբերաբար ՈԱԱԿ ներկայացնել գրավոր զեկույց իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ,
- 3) բուհի կողմից ներկայացված փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման ծրագրի վերանայման ժամանակ հաշվի առնել սույն եզրակացության մեջ նշված դիտողությունները ծրագրի վերաբերյալ:

ԱԱԿ-ը գտնում է, որ առաջարկվող բարեփոխումները կնպաստեն ինքնավերլուծության զեկույցում ներկայացված համալսարանի հավակնությունների իրականացմանը և հիմք կհանդիսանան հաջորդող գնահատման համար:


Վահան Սարգսյան,
փորձագիտական խմբի ղեկավար


Վարդուհի Գյուլազյան,
փորձագիտական խմբի համակարգող

Փորձագիտական խմբի կազմը.

- **Վահան Սարգսյան**՝ Հայկական պետական մանկավարժական համալսարանի պրակտիկայի վարչության պետ, Հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,
- **Յան Կոռնելիս**՝ Բրյուսելի Բաց համալսարանի (Vrije Universiteit Brussel) միջազգային կապերի գծով պրոռեկտոր, ֆիզմաթ. գիտությունների դոկտոր,
- **Կարեն Գրիգորյան**՝ ՀՊՏՀ մակրոէկոնոմիկայի ամբիոնի դոցենտ, տնտեսագիտական գիտությունների թեկնածու,
- **Գեղեցիկ Գրիգորյան**՝ Հայբուսակ համալսարանի Իրավագիտության ֆակուլտետի դեկան, ՀՊՏՀ իրավագիտության ամբիոնի դոցենտ, իրավաբանական գիտությունների թեկնածու,
- **Արուսյակ Հարությունյան**՝ ՀՊՄԿ Կրթության կառավարման մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանող:

ՈԱԱԿ-ի աջակցող անձնակազմ

- **Վարդուհի Գյուլազյան** – ՈԱԱԿ-ի ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման բաժնի մասնագետ, և ՄԳՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացի համակարգող,
- **Անի Մազմանյան** – Երևանի Վ. Բրյուսովի անվան լեզվաբանական համալսարանի Որակի ապահովման բաժնի համակարգող, և ՄԳՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացի թարգմանիչ:

ԱՄՓՈՓ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ³

Փորձագիտական խումբն իր գնահատումն ըստ հավատարմագրման չափանիշների ներկայացրել է հետևյալ աղյուսակով.

ՉԱՓԱՆԻՇ	ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
1. Առաքելություն և նպատակներ	Բավարար է
2. Կառավարում և վարչարարություն	Անբավարար է
3. Մասնագիտության կրթական ծրագրեր	Բավարար է
4. Ուսանողներ	Բավարար է
5. Պրոֆեսորադասախոսական ուսումնաօժանդակ կազմ	և Բավարար է
6. Հետազոտություն և զարգացում	Անբավարար է
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	Անբավարար է
8. Հասարակական պատասխանատվություն	Բավարար է
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	Բավարար է
10. Որակի ներքին ապահովման համակարգ	Անբավարար է

³ Գնահատումը կատարելիս փորձագիտական խումբը հետևել է «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգին» և Փորձաքննության անցկացման ձեռնարկում նկարագրված ընթացակարգին՝ իրականացնելով նախ չափորոշիչների, ապա նաև չափանիշների գնահատում: Կիրառվել է «անբավարար» և «բավարար» սանդղակը:

Փորձագիտական խումբը գնահատելիս օգտվել է հետևյալ սկզբունքներից.

- **անբավարար է**, եթե չափանիշի պահանջներին չի համապատասխանում, նման ձևով շարունակելն անթույլատրելի է, և հրատապ բարելավումների անհրաժեշտություն կա,
- **բավարար է**, եթե համապատասխանում է չափանիշի պահանջներին, չնայած որ կարող է լինել բարելավման անհրաժեշտություն: